

ցանք ուրիշ կղզիներու, ինչպէս Աթլանթիտին ու Փարիզի Սիթէին: Ծովը նորէն մերն է, ու միշտ կը ջարդենք ու կը ջարդենք:

*

Մեր պատուական Ատափազարցին շատ փափաքած է, որ իր սիրած հայերէնը ըլլայ միջազգային լեզու: Այս պատճառով իր լեզուն դրած էր Թուրքերուն եւ Յոյներուն բերնին մէջ՝ զանոնք ընելով հայախօս: Յանկարծ տեսած է, որ իրեն լեզու չէ մնացած: Այն ատեն սկսած է հայերէնի տեղ գործածել հայիոյերէնը:

*

Կը պատմեն, թէ Ատափազարցի մը, Սպանիացի ողորմած հոգի ազնուականի մը նման, հեծած ձիու մը վրայ, կը սուրայ սիգապանծ, բազմութեան մը աչքերուն առջեւ: Յանկարծ կ'իյնայ ձիէն ու հաւաքուած հանդիսականներուն կը յայտարարէ՝ առանց արելու ինքզինքը.

-Արդէն պիտի իջնեի (*գաթը տ'իջնեի*):

Ուրիշ Ատափազարցի մը, սակայն, նոյն պայմաններուն մէջ կ'իյնայ ձիէն՝ կոտրելով իր ոտքը: Ու գովելի ճարտասանութեամբ մը կը բարբառի զինքը շրջապատողներուն.

-Ըսելու պէտք չկայ, գիտեք, որ *իյիտ* եմ: Գիտեք ալ, որ *իյիտը* մարդէ չի վախնար: Բայց ինծի պէս ամէն *իյիտ*, իր *տիւշմանին* դէմ եղած ատեն՝ միևնակ դաւաճանութենէ կը վախնայ: Եւ ո՞վ կը համարձակի ինծի դէմ դաւաճանութիւն ընել, եթէ ոչ միայն իմ ոտքս, որուն խելքը միտքն է *տուշմանին* առջեւէն զիս փախցնել ու խայտառակել: Ահա թէ ինչու համար ոտքս կոտրեցի: Կաղ ոտք մը չի կրնար դաւաճանել: Հիմա որ դաւաճանը իր ցած նպատակին չի կրնար հասնիլ, ա՛լ ո՞վ կը համարձակի մազիս մէկ թելին դպչիլ:

Այս բոլորը ըսելէ վերջ կը դառնայ ձիուն կողմը: Ձին սակայն չկար: Գողցած էին:

Իրեն կ'ըսեն.

-Չենկիւերցի մը փախցուց ձիդ:

Ու Ատափազարցին կ'ըսէ.

-Չենկիւերցի՞ն... Անիկա իմ ախոռապանս է: